

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ, ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում, այսուհետ՝ Կողմեր,

հիմք ընդունելով 2009 թվականի նոյեմբերի 27-ի «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրը եւ դրան կից ներկայացված 2010 թվականի ապրիլի 16-ի Արձանագրությունը, 2008 թվականի հունվարի 25-ի «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» համաձայնագիրը, Մաքսային միության՝ արտաքին առետրային գործունեության կարգավորման ոլորտում իրավապայմանագրային բազան կազմող այլ պայմանագրերը եւ փաստաթղթերը,

երրորդ պետությունների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցներ սահմանմանը նախորդող ուսումնասիրություններ իրականացնող մարմինն պետական իշխանության (կառավարման) մարմինների, տարածքային (տեղական) ինքնակառավարման մարմինների, Մաքսային միության անդամ պետությունների այլ մարմինների կողմից տվյալների՝ այդ թվում գաղտնի տեղեկություններ պարունակող տվյալների տրամադրումը ապահովելու նպատակով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառմանը նախորդող ուսումնասիրություններ իրականացնող

մարմինը (այսուհետ՝ ուսումնասիրություն իրականացնող մարմին), ուսումնասիրությունը սկսելու եւ անցկացնելու, Մաքսային միության անդամ պետությունների տնտեսության ճյուղի վրա ներմուծման ավելացված ծավալի, գնագցող, լրավճարված ներմուծման ազդեցությունը եւ Մաքսային միության անդամ պետությունների առետրային շուկայում դրությունը օբյեկտիվորեն վերլուծելու, ինչպես նաեւ իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով առաջարկություններ պատրաստելու նպատակով, համապատասխան հարցումներ է ուղարկում Մաքսային միության անդամ պետությունների պետական իշխանության (կառավարման) մարմիններին եւ պետական իշխանության (կառավարման) մարմինների տարածքային (տեղական) ինքնակառավարման մարմիններին, որոնք լիազորված են մաքսային գործի, վիճակագրության, հարկման, իրավաբանական անձանց գրանցման եւ այլ բնագավառներում, ինչպես նաեւ երրորդ պետություններում Մաքսային միության անդամ պետությունների դիվանագիտական եւ առետրային ներկայացուցչություններին (այսուհետ՝ Մաքսային միության անդամ պետությունների իրավասու մարմիններ) կամ Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ սահմանված Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմիններին:

Հոդված 2

Մաքսային միության անդամ պետությունների իրավասու մարմիններին եւ լիազոր մարմիններին տեղեկությունների տրամադրման հարցումները գրավոր ձեւակերպվում են ուսումնասիրություն իրականացնող մարմնի ձեռաթղթի վրա, եւ ստորագրվում ուսումնասիրություն իրականացնող մարմնի ղեկավարի (ներա տեղակալի) կողմից՝ նշելով տեղեկությունների տրամադրման նպատակը, իրավական հիմքերը եւ ժամկետը:

Մաքսային միության անդամ պետությունների իրավասու մարմիններ եւ լիազոր մարմիններ հարցումները ուղարկվում են փոստային կապի միջոցով եւ անհրաժեշտության դեպքում կրկնակի ուղարկվում են ուսումնասիրություն իրականացնող մարմնի սերվերի վրա գրանցված ծառայողական էլեկտրոնային փոստի միջոցով: Ֆաքսիմիլային կապի միջոցով հարցումների փոխանցման դեպքում փաստաթղթի բնօրինակը նույնպես պետք է ուղարկվի փոստային կապի միջոցով:

Ուսումնասիրություն իրականացնող մարմնի հարցումներով տեղեկությունները ներկայացվում են Մաքսային միության անդամ պետությունների իրավասու մարմինների եւ լիազոր մարմինների կողմից անհատույց հիմունքներով:

Հոդված 3

Մաքսային միության անդամ պետությունների իրավասու մարմինները եւ լիազոր մարմինները իրենց իրավասության շրջանակներում հարցում ներկայացրած ուսումնասիրություն իրականացնող մարմինն են տրամադրում ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկությունները պահանջվող ժամանակահատվածների համար, այդ թվում՝

արտաքին առևտրի մասին վիճակագրական տվյալները.

նախորդող ժամանակահատվածի համար արտաքին առևտրի մասին այն մաքսային տվյալները, որոնք անհրաժեշտ են ուսումնասիրություն իրականացնելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում արտաքին առևտրի մասին մաքսային տվյալները պետք է տրամադրվեն ըստ մաքսային հայտարարագրերի (այսուհետ՝ ՄՀ)՝ նշելով ապրանքի արտահանման/ներմուծման բնաիրային եւ արժեքային ցուցանիշները, ՄՀ-ի ապրանքի առևտրային անվանումը, մատակարարման պայմանները, ծագման երկրները (ուղարկող երկրները, նշանակման երկրները), ուղարկողի եւ ստացողի անվանումները եւ այլ վավերապայմաններ.

ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներքին շուկայի եւ Մաքսային միության անդամ պետությունների տնտեսության համապատասխան ճյուղի մասին տեղեկությունները, այդ թվում՝ ապրանքի արտադրության ծավալների, արտադրական կարողությունների օգտագործման, ապրանքի իրացման, ապրանքի ինքնարժեքի, Մաքսային միության անդամ պետությունների ազգային ձեռնարկությունների եկամուտների ու կորուստների, Մաքսային միության անդամ պետությունների ներքին շուկայում ապրանքի գների, արտադրության եկամտաբերության, աշխատակազմի հաստիքների թվի, ներդրումների մասին տվյալները:

Մաքսային միության անդամ պետությունների՝ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի շուկայի համապատասխան ուսումնասիրության արդյունքներով

հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման միջոցի հնարավոր սահմանելու կամ չսահմանելու հետեւանքների գնահատման մասին տեղեկությունները, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետությունների ազգային ձեռնարկությունների արտադրական գործունեության կանխագուշակումը:

Սույն հոդվածում ներկայացված տեղեկությունների ցանկը ամբողջական չէ: Անհրաժեշտության դեպքում եւ ելնելով ուսումնասիրության անցկացման եւ դրա արդյունքներով առաջարկների պատրաստման նպատակներից՝ ուսումնասիրություն իրականացնող մարմինը իրավունք ունի պահանջելու սույն հոդվածում չնշված տեղեկություններ:

Տեղեկությունների տրամադրումը պետք է իրականացվի տեղեկությունների էլեկտրոնային կրիչների միջոցով: Այն տեղեկությունները փոխանցելիս, որոնք կարող են ներկայացվել աղյուսակի տեսքով (վիճակագրական եւ մաքսային տեղեկություններ), օգտագործվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի հարցման մեջ նշված ձեւաչափը: Փոխանցվող աղյուսակների կառուցվածքը որոշվում է տեղեկություններով փոխանակվող մարմինների միջեւ համաձայնեցված կարգով: Տեղեկությունների էլեկտրոնային կրիչով տեղեկության տրամադրման հնարավորության բացակայության դեպքում, տեղեկությունները փոխանցվում են թղթային կրիչով:

Տեղեկությունների փոխանցումը իրականացվում է տեղեկությունները փոխանակող մարմինների միջեւ համաձայնեցված այն միջոցներով, որոնք մատչելի են փոխանցման պահին եւ ապահովում են տեղեկության պահպանությունն ու պաշտպանությունը չթույլատրված մուտքից: Այն դեպքում, երբ տեղեկությունները ուղարկվում են ֆաքսիմիլային կապի միջոցով, փաստաթղթի բնօրինակը նույնպես պետք է ուղարկվի փոստային կապի միջոցով:

Սույն Արձանագրության դրույթների իրականացման հարցերով գրագրությունը եւ ուսումնասիրություն իրականացնող մարմնի հարցումներով տեղեկությունների տրամադրումը իրականացվում է ռուսերենով: Օտարերկրյա անվանումներ պարունակող առանձին ռեկվիզիտների (ցուցանիշների) դեպքում, թույլատրվում է փոխանցել տեղեկությունները՝ գործածելով լատինական այբուբենը:

Հոդված 4

Այն տեղեկությունները, որոնք Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ որակված են որպես սահմանափակ մատչելիությամբ տեղեկություններ (գաղտնի տեղեկություններ)՝ բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների (պետական գաղտնիքներ), ներկայացվում են ուսումնասիրություն իրականացնող մարմին՝ պահպանելով Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ՝ դրանց պաշտպանության առումով սահմանված պահանջները:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը պարտավոր է չհրապարակել եւ երրորդ կողմին չփոխանցել սույն հոդվածի առաջին մասում նշված գաղտնի տեղեկությունները՝ առանց այդ տեղեկությունները տրամադրած Մաքսային միության անդամ պետության իրավասու մարմնի գրավոր համաձայնության:

Գաղտնի տեղեկությունների օգտագործման եւ գաղտնի տեղեկություններ պարունակող փաստաթղթերի պահպանման ներքին կարգը որոշվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի ներքին փաստաթղթով:

Նախքան անցումային ժամանակահատվածի ավարտվելը, Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) 2010 թվականի մայիսի 21-ի թիվ 37 որոշման համաձայն, գաղտնի տեղեկությամբ դիմելու կարգը եւ գաղտնի տեղեկություններ պարունակող փաստաթղթերի պահպանության կանոնները, ինչպես նաեւ գաղտնի տեղեկությունները հրապարակելու համար ուսումնասիրություն իրականացնող մարմնի աշխատակիցների պատասխանատվությունը սահմանվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

Անցումային ժամանակահատվածի ավարտվելուց հետո գաղտնի տեղեկությամբ դիմելու կարգը եւ գաղտնի տեղեկություններ պարունակող փաստաթղթերի պահպանության կանոնները, ինչպես նաեւ գաղտնի տեղեկությունները հրապարակելու համար ուսումնասիրություն իրականացնող մարմնի աշխատակիցների պատասխանատվությունը սահմանվում են առանձին:

Հոդված 5

Մաքսային միության անդամ պետությունների իրավասու մարմինները պարտավոր են՝

ուսումնասիրություն իրականացնող մարմնի հարցումը ստանալու պահից 30 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել իրենց տրամադրության տակ եղած տեղեկությունները կամ զգուշացնել տեղեկությունների տրամադրման անհնարինության մասին՝ նշելով մերժելու պատճառը: Ուսումնասիրություն իրականացնող մարմնի հիմնավորված խնդրանքով հարցվող տեղեկությունները պետք է տրամադրվեն ավելի կարճ ժամկետներում:

ապահովեն տրամադրվող տեղեկությունների ամբողջականությունը եւ հավաստիությունը եւ անհրաժեշտության դեպքում օպերատիվ կերպով ներկայացնեն լրացումներ եւ փոփոխություններ:

Հոդված 6

Կողմերի միջեւ սույն Արձանագրության դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, խորհրդակցությունների եւ բանակցությունների անցկացման միջոցով:

Այն դեպքում, երբ վեճը Կողմերի կողմից չի կարգավորվում խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, Կողմերից յուրաքանչյուրը կարող է տվյալ վեճը փոխանցել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննարկմանը:

Հոդված 7

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Արձանագրությունում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 8

Սույն Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից, ենթակա է վավերացման եւ ուժի մեջ մտնում ավանդապահի կողմից՝

դիվանագիտական ճանապարհներով Կողմերի կողմից ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից, որոնք անհրաժեշտ են սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի նոյեմբերի 19-ին, մեկ բնօրինակից, ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահպանվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Արձանագրության ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի իր հաստատված պատճենը:

Բելառուսի
Հանրապետության
Կառավարության կողմից

Ղազախստանի
Հանրապետության
Կառավարության կողմից

Ռուսաստանի
Դաշնության
Կառավարության կողմից